

ՅԱ. ՎԻԿՏՈՐՈՎ

ԱԳՐԵՍԻԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՑԵՎՐՈՊԱՅՈՒՄ

(ՄԵԶԱՀՅԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՑՈՒՅՆ)

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՎՐԵՎԱՆ • 1939

ՅԱ. ՎԻԿՏՈՐՈՎ

9(4)2

4

ԱԳՐԵՍԻԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՑԵՎՐՈՊԱՅՈՒՄ

(Միջազգային տեսություն)

ՀՀՀ

A II  
29786.



ՊԵՏԱՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ • 1939

Я. ВИКТОРОВ  
АГРЕССИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ  
ЕВРОПЕ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

լորտների վերաբաժանումը հոգուտ ազրեսիլ յերկրների  
և ի հաշիվ այդ այսպես կոչված գեմոկրատական պետու-  
թյունների»<sup>1</sup>:

Ազրեսիան ընթանում և յոթմղոնանոց քայլերով։ Յաղո-  
նիայի թալանչւական պատերազմը Զինաստանում, իտարուգեր-  
մանական ինտերվենտների հանցագործ պատերազմն ընդդեմ իս-  
պանական ժողովրդի, Ավստրիայի զավթումը գերմանական ֆա-  
շիզմի կողմից, Զեխոսլովակիայի կողոպտումը—սրանք են փաս-  
տերը։ Ազրեսորների բլոկին չի հակադրված խաղաղասեր պետու-  
թյունների միասնական ճակատը, և դրանից լայն կերպով ոդ-  
արվում են պատերազմի հրձիզները։ Բուրժուա-դեմոկրատական  
«մեծ» պետությունները կամ ուղղակի յերես են տալիս և խրա-  
խուռում են ազրեսիան, կամ փորձում են խուսափել նրանից,  
թագնվել «չմիջամտության կոմիտեյի» հետևում, Ազգերի լի-  
դայի զանազան կոմիտեների դուստապերչային բանաձևերի հե-  
տակում։ Նրանք փորձում են փրկադնվել փոքր կամ ավելի թույլ  
պետությունների հաշվին։ Բայց ազրեսիան ընդհուպ մերձե-  
նում և ավելի ու ավելի։ Ավելի ու ավելի համառ կերպով և  
դրվում հարցը։ Կամ դիմագրություն ազրեսորին, կամ լիակա-  
ար կապիտուլացիա նրա հանդեպ։ Մշտական զիջումների քա-  
ղաքականությունը բորբոքում է Փաշխտական հափշտակիչների  
ախորժակը, վորոնք ուժեղացնում են ճնշումը վոչ միայն աղ-  
րեսիայի նախանշված զոհերի վրա, այլև խոչոր բուրժուա-դե-  
մոկրատական պետությունների վրա, վորոնցից աղրեսորը սանկ-  
ցիաներ և պահանջում նոր զավթումների ու կողոպուտների հա-  
մար։ Հենց այդպես եր և այդպես և դորձը Զեխոսլովակիայի  
վերաբերմամբ։ Յեկ հարց և ծաղում։ բայց գուցե ազրեսորներն  
այնքան ուժեղ են, վոր Անդլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը ի վիճակի  
չե՞ն նրան հակահարված տալու։ Զիտ ավելի անհեթեթ բան,  
քան նման պնդումները։ Անկասկած, այսպես կոչված «մեծ»  
պետությունները ռազմական և տնտեսական շատ ավելի մեծ  
հզորություն ունեն, քան ազրեսորները։ Կարիք ել չկա ասելու,  
վոր խաղաղասեր պետությունների միասնական ճակատ ստեղծվելու  
գեղքում, նրա մեջ Խորհրդային Միությունը մասնակցություն  
ունենալու դեղքում այդպիսի ճակատի ուժը բացարձակապես  
անհաղթահարելի կլիներ։

1 Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուռակցության  
պատմություն։ Համառա զամբնթաց, եջ 447—448։

Անդլիական «Թայմ ևնդ Թայդ» ժուռնալը կենտրոնական Յեղ-  
րովայի կրիզիսին նվիրված հոդվածում նկատթ չունի այդպի-  
սի լայն հեռանկար, բայց, խոսելով միայն Անդլիայի և Ֆրան-  
սիայի գիրքի մասին, գրում է.

«Անդլիայի և Ֆրանսիայի առաջ ծառացավ յերկշնօտրանք՝  
կամ ոիսկ անել պատերազմի դուրս դալ Գերմանիայի և նրա  
դաշնակիցների—Իտալիայի և Յապոնիայի գեմ, կամ կազինու-  
լացիա Հիտլերի հանդեպ և բավարարել նրա պահանջներն ա-  
րելյան և հարավ-արևելյան Յելիրոպայում տիրապետելու նը-  
կատամամբ։ Նրանք ընտրեցին կազինուլացիան։ Ամենեին վոչ  
այն պատճառով, վոր այլ ընտրության դեպքում պատերազմն  
անխուսափելի կլիներ։ Հեշտ և հանկանալ, վոր արևմտյան տե-  
րությունների ամելի սպառնալի դիրքը կվախեցներ Հիտլերին...  
Բայց յեթե վոր նույնիսկ Հիտլերը, չնայած նրա սպառազնում-  
ների թերություններին և տնտեսական գծվարություններին,  
սիրտ աներ պատերազմել, կշահելի՞ն արդյոք այդ պատերազմն  
արևմտյան պետությունները։ Ամեն ինչ վկայում է, վոր այս...  
Վերջին հաշվով արևմտյան տերությունների հռկայական սե-  
սուրսները վճռական և վճռողական գերակշռություն կստանային  
յերեք տոտալիտար պետությունների անբավարար և անկայուն  
սեսուրսների վերաբերմամբ։»

Ազգեսորներին հակահարված առաջ, ժուռնալի կարծիքով,  
առավել ևս անհրաժեշտ է, քանի վոր նպառնալիքն ուղղված և  
անմիջականորեն Անդլիայի և Ֆրանսիայի գեմ։ «Հիտլերը, —շա-  
րունակում է ժուռնալը, —շուր կդա զեպի արևմուտք՝ վոչ մի-  
այն ընդդեմ Ֆրանսիայի, այլև ընդդեմ Անդլիայի, վորովհետեւ  
տոտալիտար պետությունների յեռյակ միությունը հիմնված և  
Բրիտանական կայսրության նկատմամբ ունեցած թշնամության  
վրա։ Տոտալիտար պետությունների այդ միությունը պաշտո-  
նապես կոչում են հակակոմինտերնական պակտ։ Իբրև կանում նա  
և միշտ յեղել ե հակաբրիտանական պակտ։»

Խիստ արժեքավոր խոստովանություն ե և իրերի խսկական  
դրսության միանգամայն ճշմարիտ գնահատական։ Բայց յեթե  
այդ այդպիս և, ազա ուրեմն ներկայիս բարված իրադրության  
համար առավել ևս մեծ մեղավորություն և պատասխանատվու-  
թյուն և ընկնում անդլիական զեկավար շրջանների և Փրանսա-  
կան և հակական բանակին պատկանող նրանց բարեկամների վրա,  
վերոնք հանուն իրենց կասակարգային շահերի վեհեցնում են  
խաղաղասեր տերությունների ճակատը, պայմենում են կոլեկ-

տիվ անվտանգության սխտեմը, հանուն ագրեսորների հետ համաձայնության գալու զոհում են վոչ միայն փոքր յերկրների շահերը, այլև իրենց ազդային, պետական շահերը։ «Խաղաղությունը պահպանելու» դրոշի տակ, նոր ռազմական կոնֆլիկտերն, իրը թե, հետաձգելու համար, նրանք իրոք վիժեցնում են խաղաղությունը, արագացնում են ագրեսիայի զարդացման տեսապը, մոտեցնում են նոր ռազմական ավանտյուրաների ժամկետները։ Վոր այդ հենց այդպես և, հաստատում է գեղքերի զարդացումը և մասնավորապես վերջին դեպքերը կենտրոնական Յելլոպալայում։

\* \* \*

Մինչդեռ «Հռոմ—Բեռլին—Տոկիո առանցքն» արյունալի բը-սընկումներ և առաջ բերում աշխարհի մերթ այս, մերթ մյուս ծայրում, միասը Զեմքեռլենը և ուրիշները համառորեն յելք են վնասում, թե վո՞ր ծայրից մոտենան այդ «առանցքին» ավելի մոտիկ, վո՞ր կողմից կամուրջ դցեն դեպի այն։ Յեվ մի բնորոշ մշտականություն։ անհաջողությունները չեն սառեցնում բրիտանական պրեմյերի յեռանդը։ Քանի անդամ փորձեր են արվել համաձայնության դալու յապօնական իմպերիալիստների հետ, իսկ Յապոնիան բնակվ չի ուղարկում չաշվի առնել Անդրիայի շահերը և, գրավելով Հանդուցային գերքերը Հյուսիսային և Կենտրոնական Չինաստանում, համառորեն դուրս և մղում այդտեղից Անդրիային, վորը Հոկայական կորուսաներ և ունենում չինական շուկան կորցնելով։ Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ և Զեմքեռլենի՝ Մուսուլմանի հետ համաձայնության գույն այնքան վողալիորեն վերջացած փորձերը, ապրիլի 16-ի անդյունական շարաբաստիկ համաձայնությունը, վորը մինչեւ այժմ ել չի վամբերացված։ Հանուն այդ համաձայնության Զեմքեռլենը զոհեց Իդենին, վորը վոչ այնքան արագ ու հոգաբությամբ եր ազգեսորին վիճումներ անում, և այդ համաձայնության հետ կապեց իր քաղաքական կարյերան։

Զեմքեռլենն անհաջողության մատնվելով «առանցքի» հսումնեական ծայրում, գիմեց բեռլինյան ծայրին։ Արդեն Ավստրիայի գավթումը, վորն, ինչպես այժմ պարզվում է, կատարվեց անգլիական ղեկավար շրջանների գիտությամբ և որհնությամբ, ցուցյա տմեց, վոր գերմանական ազգեսորի հետ համաձայնության դալու համար անդրիական իմպերիալիզմը հոփարությամբ կիսախորի իր միջազգային պարտավորությունները։ Լոնդոնը ի-

բազենել եր այն մասին, վոր նախապատրաստվում եր Ավտորիայի գավթումը, բայց վոչինչ չարեց այն կանխելու համար։ Դեռ ալիքին, նա ամեն միջոց ձեռք առավ, վորպեսզի զավթումն իրականացվի։ Ավտորիայի աններսիայից հետո Անդլիան նորից համաձայնության և դալիս Գերմանիայի հետ Ավտորիայի Փենանտական պարտավորությունների հարցի վերաբերմամբ, համաձայնության և դալիս տռանձին և հակառակ մյուս պարտաւերերի շահերին։ Այդ բանակցությունների ժամանակ, վորին ուղեկցում եր գաժան աճուրդը, պարզվեց, վոր հաշվարկումների վերաբերյալ անդլո-գերմանական համաձայնությամբ Փաշիստական Գերմանիան, վորն այնքան տառապում և իր սպառազինումների Փինանսավորման համար անհրաժեշտ վայրուտայի բացակայությունից, Անդլիայից հասույթ ունի տարեկան ավելի բան 9 միլիոն լիարժեք Փունտ ստերլինգ։

Ավտորիան գերմանական Փաշիզմի եքսունսիոնիստական քաղաքականության մի ետապն եր միայն։ Հերթի դրվեց Զեխոսլովակիան զավթելու հարցը։ 1938 թվի մայիսից սկսած չեխոսլովակյան հարցը դառնում է ամենահրատապ և ամենացավուտ հարցը Կենտրոնական Յեվրոպայում։ Ավտորիայի զավթումը վատացրեց Զեխոսլովակիայի ստրատեգիական դիրքերը և յերկարացրեց նրա սահմանը Փաշիստական Գերմանիայի հետ։ Գերմանիան սկսում է տնտեսական ճնշումից, վորչափով վոր նրա ձեռքին են գտնվում բոլոր այն ճանապարհները, վորոնցով անցնում են ապրանքները Զեխոսլովակիայից (այդ ապրանքների համար սովորական, այսպես սասած, վոխաղբական կետը Վիեննան եր)։ Այնուհետև բորբոքվում է «սուլեկտական շարժումը»։ Կարծ սասած, 1938 թ. մայիսին արդեն ստեղծվեց ծայր աստիճան ուուր գրություն։ Գերմանական Փաշիզմը նախապատրաստում եր «հովազի վոստյունը», նախապատրաստում եր Զեխոսլովակիայի զինված զավթումը։ Դեպքերը հասունանում եյին, իհարկե, վոչ միանդամից, վոչ հանկարծակի, և գերմանական Փաշիզմը, նախապատրաստելով Զեխոսլովակիայի վրա կատարելիք հարձակումը, անտարակույթ, հաշվի յեր առնում ե՛ Անդլիայի, ե՛ Ֆրանսիայի դիրքը։

Արժե զուգընթացաբար հիշել, վոր դեռևս մարտ ամսին, Ավտորիայի զավթումից հետո, անդլիական և Փրանսական միասնատքների՝ Լոնդոնում կայացած խորհրդակցությանն անդլիացիները կատեղորիկ կերպով հրաժարվեցին իրենց վրա վերցնել վորեւ պարապակորություն, վոր ապահովեր Զեխոսլովակիայի

անկախությունը։ Իսկ մարտի 24-ին բրիտանական պրեմյեր  
Չեմբեռլենը պառլամենտում հայտարարեց, վոր Անգլիան  
կենսական վորեե շահ չունի կենտրոնական Յելլուպայում,  
վոր Անգլիային, իբր հետաքրքրում ե յելլուպական խաղաղու-  
թյան պահպանումը միայն։ Անդլիական «Կոնտենտուրարի Ռեվյու»  
ժուռնալը, մեկնաբանելով Չեմբեռլենի այդ յելլույթը, գրում եր.

«Միստր Չեմբեռլենը մարտի 24-ին իր ճառի մեջ ժխտում  
եր, վոր մենք վորեե կենսական շահ ունենք կենտրոնական  
Յելլուպայում, և պնդում եր, վոր մեր գլխավոր շահը—դա խա-  
ղաղության պահպանումն է։ Այլ կերպ ասած, վորչափով վոր  
խաղաղությունը կապահովվի, մեզ համար, եյալես, միենույն  
ե, թե ինչ պայմաններով այդ կիրագործվի։ Դրանից յենելով,  
մենք ել հենց պետք ե ճնշում գործադրենք այն կողմի վրա,  
վորն ավելի շուտ անձնատուր կլինի, և պաշտպանենք այն կող-  
մը։ Վորն ավելի շուտ կկռվի, քան թե կհամաձայնվի վորեե  
«Համաձայնության» այլ մեկնաբանություն տալու, բացի իր սե-  
փական մեկնաբանությունից։ Յեթե միստր Չեմբեռլենը կար-  
ծում ե, վոր գերմանացիները կկռվեն՝ նրանց բոլոր պահանջնե-  
րը շբավարարելու գեպքում, ապա ուրեմն... պետք ե գալ այն  
յեղակացության, վոր մենք պետք ե ճնշում գործադրենք չեխե-  
րի վրա, ստիպենք նրանց զիջել, զոհել նույնիսկ իրենց անկա-  
խությունը։

Այս հոգվածի հեղինակը քննադատում եր Չեմբեռլենի քս-  
դաքականությունը և անգլիական կառավարությանը հեղնորեն  
առաջարկում եր գործողությունների հետեւյալ ծրագիրը։  
1) ճնշում գործադրել չեխոսլովակյան կառավարության վրա,  
վորպեօզի նա լիովին բավարարի սուզետագերմանական կու-  
սակցության պահանջները և վերջինիս համար ապահովի վճառ-  
կան ազդեցություն չեխոսլովակյան քաղաքականության վրա。  
2) ճանաչել գերմանական կառավարության շահերը Չեխոսլովա-  
կիայում և որինական ճանաչել նրա կապը սուզետագերմանա-  
կան կուսակցության հետ՝ հակառակ միջազգային իրավունքի  
ընդունված սկզբունքների, վորոնք արգելում են ոտարերկրյա-  
միջամտությունը մյուս յերկրի ներքին գործերին։ 3) ճնշում  
գործադրել Թրանսիբի վրա, վորպեսզի լուծի իր գաղտնքը  
Չեխոսլովակիայի հետ։ Վորչափով վոր խորհրդային-չեխոսլո-  
վակյան պակտի գործադրությունը կախված ե Փրանս-չեխոսլո-  
վակյան պակտը գործադրության մեջ մտցնելուց, Թրանսիբայի

Հրաժարվելու հետևանքը կլիներ Զեխոսլովակիայի ավառմատիկ մեկուսացումը Ֆրանսիայից և ԽՍՀՄ-ից:

Հոդվածի հեղինակը գծվար թե կասկածած լինի, վոր նա, հեղնելով, ուրվադեել ե Զեխոսլովակիայի նկատմամբ բրիտանական քաղաքականության իսկական ծրագիրը: Յեկ մայիսյան որերին անդլիական կառավարությունն ամեն տեսակի ճնշում եր գործադրում Զեխոսլովակիայի վրա, ձգտելով նրանից զիջումներ ստանալ Փաշիստական Գերմանիայի նկատմամբ: Համենայն դեպք չեխոսլովական կառավարությունը, վորը մի ժամանակ տատանվեց, ժողովրդական մասսաների ճնշման տակ հաստատակամ և վճռական դիրք բռնեց, մասնակի մորիկիզացիա կատարեց և պաշտպանական այլ միջոցներ ձեռք առավ: Պարզ դարձավ, վոր Զեխոսլովակիան կուլելու յե, պաշտպանելու յե իր անկախությունը և աղատությունը: Զեխոսլովակիայի հաստատակամ դիրքը աղդեցություն գործեց նաև Ֆրանսիայի վրա, վորը հայտարարեց, վոր ինքը կկատարի Փրանս-չեխոսլովակյան պայմանագրով հանձն առած իր պարտավորությունները, այսինքն՝ Զեխոսլովակիային ողնության կհամնի գերմանական հարձակման դեսկրում: Խորհրդային Միությունն, ինքնըստինքյան հականալի յե, նույնպես հաստատեց իր անփոփոխ հավատարմությունն իր վրա վերցրած սպարտավորությունների նկատմամբ: Հակառակ աղդեսորի կամքի ու Անդլիայի կամքի, գործել սկսեց խաղաղության կունիտիվ պաշտպանության սխատեմը: Ինքն Անդլիան կանգնեց գծվար յերկնտրանքի առաջ. կամ կապերը խզել ֆրանսիայի հետ, կամ հրաժարվել Գերմանիայի հետ մտենալուց: Անդլիան այն ժամանակ Հիտլերին նախադրուշացրեց, վոր կոնֆլիկտի դեպքում Անդլիան կարող ե լինել գերմանական Փաշիզմի հակառակորդների բանակում, և նրան խորհուրդ տվեց, վոր նա «չափավորություն» ցուցաբերի: Գերմանական Փաշիզը, դեմ հանդիման մնալով խաղաղասիրական տերությունների հակատի դեմ, հետ նահանջեց, վորովհետեւ Փաշիստական աղբեսորը նույնքան վախկոտ և, վորքան և լաիրը:

Թվում եր, թե կացությունը նպաստավոր ե գասավորվում կամը կտրած աղբեսորին կարդի հրավիրելու համար, Զեխոսլովակյան պետության անկախությունը մեկ ընդմիջու ապահովելու համար: Սակայն հետագա դեպքերը բոլորովին այլ պատկեր ներկայացրին:

Հիտլերը բոլոր համապատասխան յեղակացություններն արեց իր ստացած դասից: Նա հետ նահանջեց, բայց միայն նրա

Համար, վորապեսզի նախապատրաստվի: Նոր՝ «Հովապի վոստյուն» կատարելու: Նա ուժեղ կերպով ավելացնում և ռազմական պատրաստությունները, պատրաստվում և ողոստոսի 15-ին նշանակված գորաշարժերին, մորիլիզացիայի յև յենթարկում համարյա 2 միլիոն դինար: Նա շատապ կերպով ամրացնում և արևմտյան սահմանը, այնտեղ ստեղծելով լայն արգելված զոնա: Արգելված դրնայում ամրություններ կառուցելու նպատակն և Ֆրանսիայի համար դժվարացնել Զեխոսովակիային ողնություն ցույց տալու հնարավորությունը՝ գերմանական հարձակման դեպքում: Բայց, բացի զուտ ռազմական պատրաստություններից, գերմանական ֆաշիզմը զարգացնում և բուռն դիվանագիտական դործունեցություն, վորի նպատակն և մի կողմից՝ ամրացնել ազրեսիլ բլուկը, նրա մեջ ներդրավել նոր մասնակիցների, իսկ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծել, վորոնք կապահովելին թողարկությունը կամ, ծայրահեղ գեղագրում, ազրեսորների սրտին այնքան սովորական և սիրալիք «չմիջամտությունը» Անդլիայի և Ֆրանսիայի կողմից: Բնորոշ և (մանրամասն այդ մասին խոսք կլինի ստորև), վոր բրիտանական դիվանագիտությունը, վորն իրը թե՝ Զեմքնութենի ասելով, կենտրոնական Յելլովայում վորեւ կենսական շահ չունի, մայիսյան որերից հետո ցույց և տալիս հանկարծակի ուժեղացած հետաքրքրություն հենց կենտրոնական Յելլովայի նկատմամբ, հետաքրքրություն, վորն իր կոնկրետ արտահայտությունն և դունում շատ ակտիվ դիվանագիտական գործունեյության մեջ:

Գերմանական ֆաշիզմը ժամանակ չկորցրեց: Նախ, նա միշտ չունի ձեռք առավ, վորպեսզի ե'լ ավելի ամրապնդի համագործակցությունը իտալիայի հետ և լրացուցիչ սպառնալիք ստեղծի Անդլիայի և Ֆրանսիայի համար: Գերմանական կառավարության հրավերով Բեռլին և գալիս իտալական մարշալ Բալբոն: Բեռլինում բանակցություններ են տեղի ունենում ռազմական համագործակցության մասին ավիացիայի աստղաբեղում: Պետք են նշել, վոր Բալբոյի այցելությանը նախորդեցին իտալական գլխավոր շտաբի պետ գեներալ Պարիանիի և իտալական ֆաշիստական միշտիցիայի շտաբի պետ գեներալ Ռուսասոյի այցելությունները Բեռլին: Միաժամանակ Հիտլերն իր գործակալներին ուղարկում է բոլոր այն փոքր յերկրները, վորոնց նա հույս ունի ներզրավելու իր աղդեցության վոլորտի մեջ: Սկզբում աղմիրալ Ռեգերը, իսկ հետո գեներալ Բառուխիչը զնում են Բուգապեշտ: Գյորինդը համառորեն «ուսումնասիրում ե» Սկանդինավյան: Գերմանական

Ֆաշիզմի հավատարիմ գործակալ լեհական արտաքին գործերի մինիստր Բեկը ուժդին կերպով աշխատում ե «չեղոք» բլոկ կազմելու վրա, Մերձբալթյան յերկրները գերմանա-լեհական ողղեցության վոլորտի մեջ ներդրավելու վրա: Հունգարական մինիստրներն, իրենց հերթին, հրավիրվում են Հոռոմ, վորտեղ Մուսոլինին փորձում ե գլուխ բերել համաձայնագրություն Հունգարիայի և Հարավսլավիայի միջև, Հունգարիայի և Ռումինիայի միջև: Այլ կերպ ասած, բոլոր միջոցները ձեռք են առնվում, վորպեսդի պայթեցնեն Փոքր Անտանտը: Վերջապես, բոլորը հիշում են Հունգարական դիկտատոր Հորտիի նորերս կատարած այցելությունը Բեռլին: Այդ այցելությունը հասցրեց այն բանին, վոր Հունգարիայի և Փոքր Անտանտի միջև նախատեսվող համաձայնությունը ձախողվում ե, չնայած վոր Փոքր Անտանտը համաձայնություն և տալիս չեղյալ համարելու Հունգարիայի սպառադիմումներին վերաբերող սահմանափակիչ վորոշումները և այլն: Վոչ մի կասկած չկա, վոր Հորտիի Բեռլինում յեղած ժամանակ քննվել և և չեխոսլովակյան պրոբլեմը: Հունգարիայի հետագա վարքագիծը միանգամայն ակներե հաստատում ե այդ: Ճիշտ նույնպես ել գերմանական ֆաշիստները համաձայնության են դալիս նաև Լեհաստանի հետ՝ Զեխոսլովակիայի վրա հարձակվելու նրա դերի մասին: Լեհաստանում սկսվում ե հակաչեխոսլովակյան կատաղի կամպանիա մամուլում և առաջ ե քաշվում Տեղինյան Սիլիցիան խելու լոգունգը:

Ինչ վերաբերում ե անմիջականորեն Զեխոսլովակիային, ապա հիտլերյան գործակալությանը—Հենլեյնականներին գիրեկտիվներ են տրվում սուր կերպով ուժեղացնել քայքայիչ գործունեյություն, խառնակություն ստեղծել, պրովոկացիաներ սերմանել և ամեն կերպ սարտաժի յենթարկել բանակցությունները կառավարության հետ, վորը փորձում ե խաղաղ կերպով կարգավորել սուդետական հարցը:

Իսկ ի՞նչպես են այդ բոլորին նայում Անգլիան ու Ֆրանսիան, ի՞նչպես են նրանք վերաբերվում ֆաշիստական Գերմանիայի գործողություններին, վորը փորձում ե շրջապատել, մեկուսացնել Զեխոսլովակիան, պայթեցնել նրան ներսից: Բրիտանական դիվանագիտությունը քնած չե: Նա իր «պոստումն» ե, ուժդին հետաքրքրություն ե ցուցաբերում նաև Զեխոսլովակիայի նկատմամբ: Այդ հետաքրքրության կոնկրետ արտահայտությունը յեղալ լորդ Ռենսիմենին Պրագա ուղարկելը, վորի միսիան

ԵՐ—Հաջողեցնել չեխոսլովակյան կառավարության կապիտուլացիան:

Ունիմենին Պրադա ուղարկելու հարցն, ինչպես Հիմա ճշգրիտ հայանի յեւ, վորոշվել է հուլիսի 20-ին, անդիմական թագավորի Փարիզում յեղած ժամանակի: Այն խորհրդակցությանը, վորտեղ ընդունվել է այդ վորոշումը, մասնակցել են անդիմական արտաքին դորձերի մինիստր լորդ Գալիֆաքսը, Փրանսական վարչապետ Դալաղյեն և արտաքին գործերի մինիստր Բոննեն: Գալիֆաքսը այդ խորհրդակցության ժամանակ զեկուցեց Հիտլերի աղյուսանատ Վիդեմանի հետ իր ունեցած զրույցի բովանդակությունը, վորը այցելել էր Լոնդոն՝ անգլիական թագավորական զույգի՝ Փարիզ մեկնելու նախորյակին: Վիդեմանը Հիտլերի անունից հալորդեց, վոր Զեխոսլովակիայի հարցի վերաբերյալ անդլո-Փրանսական վորոշումներից և կախված անդլո-դերմանական հարաբերությունների ապագան: Այսպես բացահայտորեն դրվեց հարցն այն մասին, վոր Զեխոսլովակիան հանդիսանում է վորպես մանր զրամ դերմանական և անգլիական իմակերիւմստաների միջև տեղի ունեցող աճուրդում:

Անհրաժեշտ է հիշեցնել, վոր Գալիֆաքսի և Վիդեմանի հանդիպման հետ համարյա թե միաժամանակ կայացալ և մյուս հանդիպումը՝ անգլիական պրեմյեր Զեմբեռլենի ու Լոնդոնի գերմանական դեսպան Դիրքսենի միջև: Դիրքսենը առաջ քաշեց հետեւյալ՝ նախադիմը. 1) չորս տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի կոնֆերենցիայի գումարում Լոնդոնում՝ Զեխոսլովակիայի հարցը կարգավորելու համար. 2) այդ կոնֆերենցիայում սկզբունքային համաձայնություն կայանալու դեպքում քննարկմանը մասնակից դարձնել նույնապես և Զեխոսլովակիային. 3) չեխոսլովակյան պրոբլեմի կարգավորման դեպքում սկսել ավելի լայն բանակցություններ Գերմանիայի ողային սպառադինումների և դադութային պահանջների հարցի վերաբերյալ:

Այլ կերպ ասած, Հիտլերը նորից հրապուրեց Զեմբեռլենին «չորսի պակտի» և ողային պակտի ցնորդով, պահանջելով չեխոսլովակյան պրոբլեմի՝ իր համար ձեռնուու վորոշումը:

Լորդ Ունիմենին «արգասավոր» գործունեյությունը Պրադայում հանրահայտնի յեւ: Նա հատուկ ուժով և համառությամբ շարունակեց այն ճնշումը, վոր գործադրում եյին Լոնդոնը և Փարիզը Պրադայի վրա, աշխատելով նրան ավելի ու ավելի մեծ պիտումներ անել առաջ հենինականներին, այսինքն Հիտլերին:

Նոչ մի կասկած չկա, վոր Ռենսիմենը սերտ կռնտակու եր պահ-  
պանում վոչ միայն Հենլեյնականների, այլև ադրաբային կռւ-  
սակցության այն շրջանների հետ, վորոնք Հիտլերի հետ համա-  
ձայնության գալու կողմնակիցներ եյին և վորոնց միջից Հայտ-  
քաղրվել եյին հետադայում հայտնաբերված՝ Զեխոսովակյան  
հանրապետության դեմ կաղմած դավադրության կողմնակիցնե-  
րը:

Ինքը Ռենսիմենը Զեմբեռուենին գրած իր նամակում (ուն-  
տեմբերի 21-ին) բավականին բացահայտ կերպով յերևան և հա-  
նում իր անփառունակ միսիայի խոկական նպատակները։ Նրա  
նամակից յերեսում ե, վոր Հենլեյնական մի շարք լիդերներ պատ-  
րաստ եյին համաձայնելու առողետական պրոբլեմի լուծմանը Զե-  
խոսովակյան պետության շրջանակներում։ Սակայն Ռենսիմենը  
արտահայտվեց հոգուտ այն բանի, վոր տերիտորիայի մի մասը  
տրվի Գերմանիային, և ակնարկեց Հենլեյնականների լիդերնե-  
րին, վոր Հարցն անհրաժեշտ և լուծել վոչ Զեխոսովակյան ոկ-  
տության շրջանակներում, քանի վոր «Հարցի նման լուծումը կլի-  
ներ ժամանակավոր միայն»։ Յեզ, այնուամենայնիվ, Հենց նույն  
Ռենսիմենը Հարկադրված եր ընդունել, վոր չեխոսովակյան կա-  
ռավարության հետ Հարաբերությունների խոյժուն պատասխա-  
նակությունն ընկնում և Հենլեյնի վրա։

Ռենսիմենի միսիան ձախողվեց, վորովհետև Հիտլերը յեր-  
բեք չեր ուզում սուղետական պրոբլեմի վոչ մի խաղաղ կարգա-  
վորում։ Դարձյալ ու դարձյալ Հաստատվեց, վոր ոիջումների  
քաղաքականությունը տանում և գեպի ադրեսորի պահանջների  
աճումը միայն։ Սկզբում Հենլեյնականները պահանջում եյին կա-  
ռավարության կողմից մշակված «ազգային կողեջսի» շուտո-  
փույթ քննարկումը։ Հետո նրանք պահանջեցին Հետաձգել և ա-  
ռաջ քաշեցին իրենց հականախագիծը, վորը պարունակում եր  
կառավարության համար անընդունելի պահանջներ։ Կառավարու-  
թյունը Համաձայնեց Հենլեյնականների Հռչադրին ընդունել վոր-  
ուս Հիմք գիտկության համար։ Բայց այդ եւ չբավարարեց Հեն-  
լեյնականներին։ Երանք Հայտարարեցին, վոր իրենց կարող և  
բավարարել ախրահոչակ «կառլսբադյան ծրագրի» պահանջների  
լրակատար ընդունումը միայն։ Իսկ Կառլսբադի ծրագիրը, ինչ-  
պես Հայտնի յէ, նախատեսում եր վոչ միայն Սուլեհաֆայի լիտ-  
կատար ավառնոմիս, այլև Զեխոսովակիայում ապրող գերմա-  
նացիների, այսպես կոչված, «անհատական ավտոնոմիա» (այսին-  
քըն) Զեխոսովակիայում ապրող յուրաքանչյուր գերմանացի

յենթարկվում և վոչ թէ կառավարությանն, այլ «Փյուրերին», այսինքն Հենլեյնին), և այլն և այլն: Բայց կառավարության կողմից կառլրադյան ծրագրի համարյա բոլոր 8 կետերն ընդունելը նույնիսկ չբավարարեց հենլեյնականներին: Նրանք պահանջեցին «պլեբիստիա» (հանրաքվե) և, վերջապես, պարզապես ու կոտրիս կերպով խողեցին բանակցությունները: Միանգամայն ակնհայտ գարձակ այն, վորը շուտով փաստերով հաստատվեց, այսինքն՝ բանակցությունների ամրագ այդ կոմիտիան քեմադըրվեց նրա համար, վորպեսզի ժամանակ շահեցին և հոդ նախապատրաստեցին գերմանական զորքերի՝ Զեխոսպովակիա ներխուժելու համար:

Նյուրնբերգում բացվեց ֆաշիստական «համագումարը»: Սեպտեմբերի 12-ին Հիտլերն արտասանեց իր ճառը, — ու մի ահազանգ եր, վորից հետո Սուլեյտի մարզում բանկվեց հենլեյնական պուտոչ: Ունախմբնն այլևս դործի չեր: Բոլոր խաղաթղթերը բացվեցին: Ամեն ինչ պարզվեց: Զեխոսպովակյան կառավարությունը չեր կարող արդեն համաձայնել վորեւել զիջումների: Նրա առաջ ծառացակ պուտաչը լիկվիդացիայի յենթարկվեց, և իսեբեյում, հենլեյնականների շոար-բնակարանում բանված փաստաթղթերը հաստատեցին Զեխոսպովակյան հանրապետության գեմ սարքված դավադրության առկայությունը: Հենլեյնը և նրա թեարկյանները դուրս յեկան խռովության կազմակերպվելներ, վորոնք գտնվում եյին ֆաշիստական Գերմանիայի հետ մշական կապակցության մեջ, այնտեղից ստանալով փող և զենք: Զեխոսպովակյան կառավարությունը հայտարարեց Հենլեյնին պետական դաման և հրաման արձակեց նրան ձերբակալելու մասին: Ամբողջ ժողովուրդը վճռականապես համանություն տվեց այդ միջոցառումներին: Սակայն, ինչպես հետո պարզվեց, ձեռք եյին տոնմել ամեննեին ել վոչ բոլոր միջոցները: Ներքին գործերի մինիստրությունը լիկվիդացիայի չեր յենթարկել հենլեյնականների բարձրաթիվ բներ, թեպետև գիտեր նրանց դոյության մասին: Այսպես թե այնպես, պուտչը չհաջողվեց: «Բապանական վարիանտը» առաջարկվեց:

Թվում եր, թե այդ ժողովներին, յերբ վերջնականապես արդեն բացված եր ֆաշիստների ամրագ խաղը, Զեխոսպովակիան իրավունք ուներ պաշտպանություն զանելու Անդլիայի և Ֆրանսիայի կողմից, վորոնք նրան գրդում եյին զիջումներ անելու պետական դամաններին և հայրենիք մատնողներին: Յեկ վոչ մի կառկած

չկա, վոր յեթե այդ մոմինտին մի ծանրակշխու խոռոք առվեր, Լոնդոնից և Փարիզից լավեր մի ահեղ բզավոց՝ հաստատված վճռական գործողություններով, Հիտլերը նորից հետ կնահանջեր:

Իսկ ի՞նչպիսի վերաբերմունք ցույց տվեց Լոնդոնը ստեղծած գած դրությանը: Տեղի ունեցավ միտար Զեմբեռլենի առաջին «դրամատիկական թոփչքը» դեպի Գերմանիա: Այդ թոփչքը պատկերացվեց վորպես «խաղաղաբարական» ժեստ, վորպես խաղաղությունը փրկելու կրկնակի ջանք: Բուրժուական մամուլի ջանքերով հասարակական կարծիքը բավական ճարպիկ կերպով մշակվեց, և շատ միամիտ մարդիկ խկապես հավատացին, թե Զեմբեռլենը սլացավ խաղաղությունը փրկելու: Մոտակա որերը ցույց տվին այս հաստատման ամբողջ անմտությունը, յերեան հանեցին բրիտանական գիվաննադիտության ամբողջ կեղծավարությունը:

Չեմբեռլենը սլացավ Գերմանիա, վորպեսզի փրկի վոչ թե խաղաղությունը, այլ ազբեսորների հետ համաձայնության դարձու իր քաղաքականությունը, փրկի հենց իրեն Հիտլերին, վորը կարող եր ընկնել գդվարին դրության մեջ, յեթե նորից, ինչպես մայիսին, ողործողության մեջ դրվեր խաղաղության կուեկտիվ պաշտպանության սիստեմը: Բերիտեսուղադենից բրիտանական պրեմյերը բերեց Հիտլերի պահանջները: Ֆաշիստական դիկտատորը համառորեն պահանջում եր, վորպեսզի Գերմանիային միացին Սուլետական մարզի այն շրջաններում, վորտեղ գերմանական բնակչությունը 50%-ից ավելի, և հանրաքաղաքացիները այն շրջաններում այն շրջաններում, վորտեղ գերմանական բնակչությունը 50%-ից չի անցնում: Բացի դրանից, նա պահանջեց Զեխոսուղակիայի արտաքին քաղաքականության որիննոտացիայի փոփոխություն, այսինքն՝ առաջին հերթին Ֆրանսիայի և ԽՍՀՄ հետ կնքված փոխադարձ ողնության վերաբերյալ պայմանագրերի լուծարքը: Այդ պահանջները վրդովմունք առաջ բերին Զեխոսուղակիայում և Անդիայի ու Ֆրանսիայի ամենալայն հասարակական շրջաններում:

Չեմբեռլենը Լոնդոն վերադառնալով, այնտեղ հրավիրեց Փրանսական պրեմյեր Դալազյեյին և արտաքին գործերի մենիստը Բոննեյին: Միատեղ խորհրդակցությունում մշակվեց ախրահռչակ անգլո-Փրանսական պլանը, վորը փաստորեն նախատեսում եր Հիտլերի բոլոր պահանջների բավարարումը: Այդ պլանի համաձայն Գերմանիային պետք է անցնելին Սուլետական մարզի՝ 50%-ից ավելի գերմանական բնակչություն ունեցող

գերմանական շրջանները, խառը բնակչություն ունեցող մյուս շրջաններում յենթադրվում եր հանրաքվիլե անցկացնել: Այսուհետեւ պլանը նախատեսում եր ֆրանս-չեխոսլովակյան և խորհրդացին-չեխոսլովակյան փոխադարձ ողնության պակասի վոչնչացումը: Վորպես փոխատուցում՝ պլանը նախատեսում եր չեխոսլովակյան սահմանների վերաբերմամբ յերաշխիքներ նրա հարեան-ների—Գերմանիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Ռումինիայի կողմից: Բացի դրանից, նախատեսվում եր նույնպես գերյերաշխիք Անդլիայի ու Ֆրանսիայի կողմից:

Այդ պլանի բովանդակությունը պաշտոնապես շարադրված եր հետեւյալ կերպ.

1. Առանց հանրաքվիլեյի Գերմանիային հանձնել այն շրջանները, վորտեղ գերմանացինները կազմում են բնակչության 50%-ից ավելին: Նախատեսվում ե, վոր սահմանների ճշգրտումն այն գեպքերում, վորտեղ այդ անհրաժեշտ կլինի, կատարվի միջադգային հանձնաժողովի կողմից՝ նրա մեջ մտցնելով Զեխոսլովակիայի ներկայացուցչին:

2. Գերմանական և չեխոսլովակյան բնակչության փոխադարձ հայրենադարձումը (репатриация) այդ բնակչության պարտ կերպով արտահայտված կարծիքի հիման վրա՝ վորոչքամանակամիջոցի ընթացքում:

3. Յեթե չեխոսլովակյան կառավարությունը պատրաստ է այդ միջոցները ձեռք առնելու, վորոնք իրենց հետ առաջ կրերեն Զեխոսլովակյան պետության գոյության պայմանների փոփոխություն, ապա չեխոսլովակյան կառավարությունը կարող է հարց գնել իրեն հավաստիացումներ տալու մասին՝ Զեխոսլովակիայի անվտանգությունն ապագայում ապահովելու նպատակով:

4. Միջազգային յերաշխիքները, վորոնք ապահովելու յեն Զեխոսլովակյան պետության անկախությունն ամեն տեսակ ագրեսիանների դեպքում, պետք ե փոխարինեն գոյություն ունեցող պայմանագրերը, վորոնք կնքված են չեխոսլովակյան կառավարության կողմից ռազմական բնույթի փոխադարձ ողնության մասին:

5. Անդլիական կառավարությունը պատրաստակամություն քայլուեց մասնակցելու Զեխոսլովակյան պետության այդ նոր սահմանների միջազգային յերաշխիքներին՝ ընդդեմ անտարիթոգրեսիայի:

Այդ պլանը, վորը ներկայացնում եր խայտառակ դավաճանություն Զեխոսլովակյան վերաբերմամբ և Անդլիայի ու Ֆրան-

սիրայի հանձն առած միջազգային պարտավորությունների և  
պայմանադրերի խախտում, —ընականաբար բացասական վերա-  
բերմունքի հանդիպեց Զեխոսոլվակիայում։ Նա առաջ թերեց  
ամբողջ յերկրում բուռն զայրույթ և բողոքի շարժում Ֆրան-  
սիայում ու Անդլիայում։ Յեկալ, չնայած դրան, Անդլիան ու Ֆրան-  
սիան ուշտիմատիվ կերպով Զեխոսոլվակիայից պահանջեցին այդ  
պլանի ընդունումը, սովորականութեամբ, վոր հակառակ դեպքում Զեխո-  
սոլվակիային սղնություն չի ցույց արվի, յեթե Գերմանիան  
նրա վրա հարձակվի։ Զեխոսոլվակիան կառավարությունն ասիստ-  
ված յեղավ անձնատուր լինել։ Բայց պարզվեց, վոր այդ կա-  
պիտուլացիան ևս բավական չե, վորովհետեւ աղբեսորների պա-  
հանջներն այդ ժամանակամիջոցում աճեցին։ Այդ որերին ուժեղ  
խորհրդակցություններ եյին տեղի ունենում Գերմանիայի, Լե-  
հաստանի և Հունգարիայի ներկայացուցիչների միջև։ Լեհաստա-  
նը և Հունգարիան բողոք հայտնեցին այն բանի գեմ, վոր անդ-  
լո-Փրանսական պլանում չի նախատեսված նրանց պահանջների  
բավարարումը։ Լեհաստանինը—Տեղինան Սիլեզիայի վերաբեր-  
մամբ, իսկ Հունգարիայինը—Սլովակիայի և Անդրկարպատյան-  
Ռումիայի վերաբերմամբ։ Այդ նույն ժամանակ գերմանական  
ֆաշիստական մամուլում նորից ուժեղացավ կամպանիան ընդդեմ  
Զեխոսոլվակիայի։ Գերբելը Զեխոսոլվակիայի լիակատար վոչըն-  
չացման լողունկ նետեց։

Սակայն պլանները չեյին միայն այդ որերին մշակվում։ Այդ  
որերին չեյին դադարում հենցեյնականների պրովոկացիաները։  
Մումենտ յեղավ, յերբ Սուլքետական մարզի մի շարք քաղաքներ  
փաստորեն գտնվում եյին ֆաշիստական գործակալների ձեռքին։

Զեխոսոլվակիայում բարձրացած ժողովրդական զայրույթի  
ալիքը։ Տեղի ունեցան բազմամարդ բուռն ցույցեր։ Ցուցարար-  
ները գնում եյին դեպի պրեզիդենտի պալատը և զենք եյին պա-  
հանջում հայրենիքի պաշտպանության համար։ Դուշայի կառա-  
վարությունը չկարողացավ յերկար մնալ իշխանության գլուխ-  
մանավանդ վոր նրա գոյության վերջին որերին «առարողինուկ»  
յերեսույթներ տեղի ունեցան։ Վոչ միայն զինաթափ չարվեցին  
բաղմաթիվ հենցեյնական բանդաները, այլև Սուլքետական սահ-  
մանի վրա գտնվող չեխոսոլվակիան զորքերն անսօպտանելութեան  
հրաման ստացան եվլակուացիայի յենթարկվելու—հետ քաշվելու  
դեպի յերկրի խորքը։ Ակովեց չեխական զորքերի հետխաղացու-  
թյունը։ Փաստորեն Սուլքետաները համարյա թե մի ամբողջ որ  
գտնվում եյին հենցեյնականների ձեռքին։ Բայց այդ որը (ուշը)

առեջբերի 22-ին) Գողացի կառավարությունը հրաժարական տվեց, և կազմվեց կառավարություն՝ գեներալ Սիրովիի գլխավորությամբ։ Յեվ նոր կառավարության առաջին հրամանը չեխուրովական դորքերը վերադարձրեց դեպի Սուլեստական մարդը, վորագեղ արդեն փորձում եյին ներխուժել «կամավորների սուլեստական կորպուսի» ջոկատները դերմանական դրոհայինների և պահնողդական ջոկատների հետ միատեղ։

Դերմանական մամուլը կատաղի վոռնոց բարձրացրեց նոր կառավարության գեմ։ Նորից լարված դրություն ստեղծվեց։ Այդ ժամենատին (սեպտեմբերի 22-ին) Զեմբեռլենը յերկրորդ անգամ թռավ դեպի Գերմանիա՝ Գողեսրերդ և բերեց Հիտլերին անողովագրական պլանը։ Բըխտանական պլանը ծանր հիմնաթափություն ունեցավ, վորովհետեւ պարզվեց, վոր Փաշիստական ղիկտառորի համար այդ զիջումները քիչ են։ Նրա պահանջների ցուցակը զգալի չափով աճեց։ Հիտլերն իր հուշադրի մեջ պահանջեց Գերմանիային միացնել Զեխտսլովակիայի բավականաչափ տերիտորիա, անհապաղ հետ քաշել այդ տերիտորիայից շեխտովակյան սպառազինած ուժերը, վոստիկանությունը, ժանդարմերիան և սահմանային պահնորդությունը, այն հաշված, վորպեսզի այդ տերիտորիան հենց միանդամից ոկուպացիայի յենթարկվի գերմանական բանակի կողմից։ Այդ տերիտորիան Գերմանիային պետք է հանձնվի բոլոր տրանսպորտային, ռազմական, արդյունաբերական և այլ կառուցումների հետ միասին, ներսույալ նաև աերոդրոմները, սադիօկայանները, յերկաթուղինների շարժական կազմը։ Նույնպես պետք է հանձնելներն պարենը, անասունները և ամեն տեսակ հումուզինները։

Այսուհետեւ հուշադրիրը պահանջում եր հանրաքիայի կիրառությունը Զեխտովակիայի՝ խառը բնակչություն ունեցող ուրիշ շատ շրջաններում, վերջիններիս պետական պատրիաներությունը վրաչելու համար։

Հիտլերի պահանջած տերիտորիաների միացումը Գերմանիային՝ նշանակում եր Զեխտովակիային զրկել նրա սահմանային ամբացված շրջաններից, կարեսը արդյունաբերական կենտրոններից, ել չենք խոսում այն մասին, վոր Զեխտովակիան կորցնում եր այդ գեղքում իր բնական պաշտպանական գիծը, վոր հանդիսանութ են Սուլեստական լեռները նրա հյուսիսային սահմաններում։

Հուշադրիրը պահանջում եր բնասարկված բոլոր հենցինականներին անհապաղ պատ արձակել։ Միաժամանակ Հիտլերը

դիմեց հետեւյալ մանյովվրին . նա «վողորմածաբար» համաձայնում և թույլ տալ «միջազգային վերահսկողությունը» հանրաքվեյի կիրառման նկատմամբ և «թույլ և տալիս» միջազգային հանձնաժողովին մասնակցել Զեխոսովակիայի նոր սահմանների վերջնական վորոշմանը :

Հուշադրին կցվեց մի քարտեղ : Նրա վրա կարմիր գույնով աշված են այս չըջանները , վորոնք պետք և հոկահմբերի 1-ին անցնեն Գերմանիային , և կանաչ գույնով՝ այն չըջանները , վորուեղ պետք և հանրաքվե կիրառվի :

Բացի դրանից , Հիտլերը պնդում էր , վոր բավարարեն Հունգարիայի և Ահաւատանի պահանջները : Հիտլերի չափից գուրս պահանջները շփոթեցրին նույնիսկ Զեմբեռլենին , և այդ նոր պահանջները հանձնվեցին . չեխոսովակիան կառավարության՝ արդեն առանց գրանք անկայման ընդունելու հանձնարարության :

Հիտլերի սպահալիքի կապակցությամբ չեխոսովակիան կառավարությունը հրաման արձակեց ընդհանուր մորիլիզացիայի մասին : Այդ միջոցն ամենալայն հավանություն գտավ ծովովը ըստի կողմից : Բավական ե ասել , վոր մորիլիզացիան կառարվեց վայրուն կերպով և վերջացավ ժամկետից յերկու ժամ շուտ : Ընդվորում բնորոշ ե , վոր ազգային փոքրամասնություններն ամենաչնչին չափով իսկ շխուսափեցին մորիլիզացիայի վերաբերյալ հրամանը կատարելուց և այսպիսով հայտարարեցին իրենց լիակատար պատրաստականության մասին՝ պաշտպանելու հանրապետության ազատությունը և անկախությունն ընդդեմ ֆաշիստական լծի : Հետաքրքրական ե նաև այն , վոր Լոնդոնն ամեններն չեք առարկում Զեխոսովակիայում կատարման մորիլիզացիայի գեմ :

Լոնդոն ժամանեցին Դալալյեն և Բոննեն՝ խորհրդակցության : Հիտլերի ուլտրամատումը ճանաչվեց վորպես անընդունելի : Զեխոսովակիան կառավարությունը մերժեց այն : Մամենա յեղավ , յերբ թվում էր , թե Ֆրանսիան և Անգլիան բռնել են , վերջապես , ամուր դիրք և չեն դիջի ազգեասորին : Դեպքերի հետագա զարգացումը , սակայն , ցույց տվեց , վոր Զեմբեռլենը ոգրեսորի հետ համաձայնության դալու իր քաղաքականությունից հետ չի կանգնել :

Հիտլերյան հուշադրի մերժումը , Անդլիայի և Ֆրանսիայի բացառական վերաբերմունքը նրա նկատմամբ՝ ֆաշիստական «Փյուրերին» վորոշ շփոթության հասցրին : Սեպտեմբերի 26-ին նա «Ապօրա-Պալաս»-ում հանդես յեկավ մի ճառով , վորի մեջ , չու-

յած Զեխոսլովակիայի դեմ ուղղված հարձակումներին, ակնհայտութեն վախկոտ նոտաներ եյին հնչում։ Նա ամեն կերպ յերդվում եր, թե ինքը հավատարմորեն ձգտում ե բարեկամություն պահպանելու Անդլիայի հետ, հավատացնում եր, թե ժտադիր չե վունդղություն անել Ֆրանսիայի սահմանների վերաբերմամբ, և հասատում եր, թե Սուդեաները—նրա վերջին աերիտօրիալ պահանջն են Յելլովայում։

Անկասկած, յեթե Անդլիան և Ֆրանսիան այդ մոմենտին վճռականապես հայտարարելին, վոր խոռք անդամ չի կարող լինել հետագա վորեւ զիջումների մասին, գերմանական ազրեսորչ հետ կնահանջեր։ Բայց Հիտլերը հաստատապես հույս եր դրեւ, վոր նրան ողնության ձեռք կմեկնվի։ Ենվ Զեմբեռլենը չդանդաղեց այդ անել, Հիտլերին դիմելով անձնական նամակով, վորի մեջ ակնարկում եր, թե պատրաստ ե համաձայնելու լրացուցիչ դիջումների։

Մասնակով Զեմբեռլենի նամակը, Հիտլերը հասկացավ, վոր խոտը կարելի էր շարունակել, ուժեղացրեց ճնշումն Անդլիայի, Ֆրանսիայի և Զեխոսլովակիայի վրա։ Զեմբեռլենին դրած իր պատասխան նամակում Հիտլերը հայտարարեց, վոր իր ուղարձառական ժամկետը նա կրծատում ե և պահանջում է, վոր չեխոսլովակյան կառավարությունը նրա ուղարմատումին պատասխան ուա վոչ թե հոկտեմբերի 1-ին, այլ սեպտեմբերի 28-ին, ժամի 12-ին։ Պատասխան չսահանալու դեսպանը կհայտարարվի ընդհանուր մորիլիզացիա, և գերմանական զորքերը կշարժվեն դեպի Սուդեական մարզը։

Ներկայացնելով այդ նոր ուղարձառական ֆաշիստիները հետապնդում հասկացան, թե ինչումն ե այդ մանյովիրի խմասոր։ Բայց պետք ե ասել, վոր այդ ժամանակ արդեն կտարարվել եր ամբողջ անդլիական նախատորմի մորիլիզացիա, Ֆրանսիայում կերաւովեցին մի շարք պաշտպանական միջոցներ, այդպիսի միջոցներ ձեռք առան և համարյա թե բոլոր յելլովական պետությունները։ Զեմբեռլենը նորից նախաձեռնություն հանդեռ բերեց և նորից ողնության ձեռք մեկնեց Հիտլերին։ Այսօք ծընվեց Մյունխենում «չորսի կոնֆերենցիան» գումարելու պաղափարը, այն կոնֆերենցիան, վորին այնպես սիրով համաձայնեց Հիտլերը։ Նա, ասենք, արդեն հաստատապես գիտեր, վոր ուղարձական կոնֆլիկտի չի դիմի, յեթե իրական գուրք գա այն

ապառնալիքը, թե Ֆրանսիան և Անդլիան հանդեմ են գալու Զեխոսը լովակիայի կողմը:

Համաշխարհային հասարակական կարծիքը հրեշտային կերպով խաբելլը հենց նրանումն ել կայանում ե, վոր Զեմքեռլենի և Դալադյեյի կողմնակիցները փորձում են բոլորին հավատացնել, վոր իր թե Հիտլերը, միենույն ե, կակսեր պատերազմել, չնայելով վոչ մի նախազդուշացման և սպառնալիքի, յեթե նրա պահանջները չբավարարվեյին: Իսկ մինչդեռ չկա և չի կարող վոչ մի կասկած լինել այն բանում, վոր յեթե Հիտլերը հաստատ համոզված լիներ, վոր Ֆրանսիան և Անգլիան իսկապես հանդես կցան Զեխոսովակիային պաշտպանելու, վոր գործադրության մեջ կդրվի կուեկտիվ անվտանգության սիստեմը և ազրեսիայի գոհի պաշտպանությունը, նա յերբեք սիրու չեր անի բացեիրաց հարձակվելու Զեխոսովակիայի վրա:

Ուստի միանդամայն անհիմն ու կեղծ են այն հայտարարությունները, թե Մյունխենի խորհրդակցությունը կանխեց պատերազմը: Նա չկանխեց պատերազմն, ընդհակառակը, նա ամենալաժան հարվածը հասցրեց խաղաղությանը և անվտանգությանը:

«Չորսի կոնֆերենցիան» Մյունխենում ընդունեց հետեւյալ գործումները.

Անդլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Խոտալիան կնքեցին համաձայնություն, վորը նախատեսում ե չեխոսովակիան գորքերի և վակուացիայի սկիզբը՝ Սուլետական մարդի այն շրջաններից, վորտեղ գերակշռում ե գերմանական բնակչությունը՝ հոկտեմբերի 1-ին և զորքերի լիակտար հեռացումը հոկտեմբերի 10-ին: Հանրաքվեյի հարցի մասին մնացած շրջաններում, վորտեղ գերմանական բնակչությունը մեծամասնություն չի կազմում, վորոշվում ե միջազգային հանձնաժողովի կողմից: Հենց այդ հանձնաժողովն ել կլորոշի և Զեխոսովակիայի նոր սահմանները: Հանձնաժողովի կազմի մեջ պետք ե մտնեն Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղարը, Բեռլինի Փրանսական, անգլիական և խոտական դեսպանները և Զեխոսովակիայի ներկայացուցիչը:

Համաձայնությունը նախատեսում ե, վոր եվակուացիայի յենթակա շրջաններում գոյություն ունեցող վոչ մի ամրություն չաղետք ե քանդվի: Սուլետական մարդի ոկուսացիան գերմանական գորքերի կողմից պետք ե կատարվի չորս նվազ: Այն շրջանները, վորտեղ հանրաքվե յե տեղի ունենալու, պետք ե մացվեն միջադ-

Դային զորքեր, վորոնք այնտեղ կմնան ընդհուպ մինչև հանրաքլեյի վերջանալը: Միջազգային հանձնաժողովը պետք է ամսաթիվը վորոշի, թե յե՞րբ ե տվյալ շրջանում տեղի ունենալու հանրաքվեն: Սակայն համաձայնությունը նախառեսում է, վոր հանրաքվեն բոլոր շրջաններում պետք է կայանա նոյեմբերի վերջից վոչ ուշ: Բնակչությանը հայրենադարձման իրավունք կտրվի վեց ամսվա ընթացքում:

Համաձայնությունը պարտավորեցնում և չեխոսլովակյան կառավարությանը՝ տվյալ համաձայնությունը կնքվելու որից հաշված չորս շաբաթվա ընթացքում ազատել զինվորական և վոստիկանական պարտականություններ կրելուց սուդետական այն բոլոր գերմանացիներին, վորոնք այդ ցանկությունը կհայանեն: Նույն այդ ժամկետի ընթացքում ել չեխոսլովակյան կառավարությունը պարտավոր և ազատ արձակել սուդետական բոլոր այն գերմանացիներին, վորոնք դատապարտված են քաղաքական մոռականությունից:

Անգլիան և Ֆրանսիան հանձն են առնում Զեխոսլովակիայի նոր սահմանների յերաշխիքը՝ անառիթ ազբեսիայի դեպքում: Գերմանիան և Բատական, իրենց հերթին, Զեխոսլովակիայի նոր սահմանների յերաշխիք են խոստանում, բայց միայն այն բանից հետո, յերբ կկարգավորվի լեհական և հունգարական փոքրամասնությունների վերաբերյալ հարցը:

Այն դեպքում, յեթև Զեխոսլովակիայի լեհական և հունգարական փոքրամասնությունների վերաբերյալ հարցը չի կարդավորվի յերեք ամսվա ընթացքում՝ շահադրդուված տերությունների համաձայնությամբ, Մյունխենի խորհրդակցության մասնակիցները նորից կհավաքվեն այդ հարցի քննարկման համար:

Ի՞նչ են նշանակում գործնականում մյունխենյան կոնֆերենցիալի վորոշումները: Երանք նշանակում են, վոր գերմանական Փաշիզմի ձեռքն ե անցնում Զեխոսլովակիայի պաշտպանության առաջին դիմք, վոր վիժում և Յելլոպայում դոյություն ունեցող անվտանգության սխտեմը, վոր միջազգային պայմանագրերը և պարտավորությունները թղթի կտորտանքի յեն վերածվել, վոր գերմանական Փաշիզմի առաջ բաց և Զեխոսլովակյան հանրապետության լիակատար ստրկացման ուղին:

Զեխոսլովակիան հանգիսացավ մանր դրամ Գերմանիայի և Անգլիայի միջև տեղի ունեցող աճուրդում: Այդ բավականաչափ ցինիկ կերպով հաստատեցին իրենց միատեղ դեկլարացիայում Զեմբեռենը և Հիտլերը: Այդ դեկլարացիայում նրանք

Հայաստաքում են, վոր անդլո-գերմանական հարաբերություն-ները առաջնակարգ նշանակություն ունեն Յեվրոպայի համար: Վոր չեխոսլովակայան պրոբեմի լուծումը և անդլո-գերմանական ծովային Համաձայնությունը հանդիսանում են վորպես միայնություն յերկու պետությունների՝ իրար հետ չկովկելու ցանկության:

Անդլո-գերմանական դեկլարացիայի լույսի տակ հատկապես պարզ և դառնում անդլիական կառավարության դաշանական տակտիկան Զեխոսլովակիայի նկատմամբ: Բերխտենդադենից Զեմբեռնունը դիմում և Զեխոսլովակիային և կոչ և անում «միջադեպեր չստեղծել»: Այդ պետք է, իրք, ամբացներ նրա գերբքը Հետևերի հետ վարած բանակցություններում: Գողեսքերդի բանակցությունների ժամանակ բրիտանական դիվանագիտությունը հայտարարում է, վոր չի առարկում ընդդեմ Զեխոսլովակիայի ժորիլիղացիայի: Այդ վերստին պետք և ամբացնի Զեմբեռնունի գերբքը: Ստանալով հիտերյան հուշագիրը, անդլիական դիվանագիտությունը այն հանձնում և չեխոսլովակյան կառավարությանը և հայտարարում, վոր չի կարող խորհուրդ տալ վոչ այն ընդունել, և վոչ ել մերժել: «Չորսի կոնֆերենցիայից» հետո Զեխոսլովակիային ներկայացվում և աղբեսորի պահանջները բավարարելու պլան՝ փաստորեն անդլո-ֆրանս-իտալո-գերմանական ուղղիմատումի ձևով:

Զեխոսլովակիան թանու վճարեց բրիտանական իմպերիալիտմի՝ գերմանական ֆաշիզմի հետ համաձայնության դալու համար: Բայց միայն Զեխոսլովակիան չեւ. Զեխոսլովակիան ֆրանսական աղղեցության վերջին հենակետն եր կենտրոնական Յեվրոպայում, մյունիսենյան կոնֆերենցիան լուծարքի յենթարկեց այդ կետը: Դրանով խել Ֆրանսիայի անվտանգությանը նույնպես ամենալուրջ հարվածն և հասցված:

«Չորսի կոնֆերենցիայում» քննարկվեց վոչ միայն Զեխոսլովակիայի հարցը—քննարկվեց նույնպես Միջերկրական ծովի պրոբեմը և Խսպանիայի հարցը: Զեխոսլովակյան հարցի վերաբերմամբ ընդունված վորոշումների բնույթը լիակատար հնարավորություն և տալիս պատկերացնելու, թե ինչ պլանով և ընթցել խսպանական հարցի քննարկումը:

Բնորոշ են այն փորձերը, վորոնցով ուղում ելին վորեականապարհով, թեկուղ զարտուղի կերպով դեպի մյունիսենյան խայտառակ համաձայնությունը քաշել Խորհրդային Միությունը—այն միակ մեծ տերությանը, վորը հետևողականորեն և

անշեղորեն պայքարում և ընդհանութ խաղաղության համար, վորը փոքր յերկրների անկախության անշահախնդիր բարեկամն և ու ողաշտապանը, վորն իսկական մարտիկն և աղբեսորի դիմ:

Համապատասխան ծխածածկույթ բաց թողնելու համար մոռիլութիւնի յեն յենթարկվում կասլիտալիստական զանազան հեռագրական գործակալությունների դրչակներ: Որինակ, «Յունայտեդ Պրեսս» գործակալության փարկոյան թղթակիցը հազորդում եր նյու-Յորք, վոր իր թե ԽՍՀՄ-ի կառավարությունը լիազորել և Դալաղյեյին հանգես գալ Մյունխենի «չորսի կոնֆերենցիայում» Խորհրդային Միության անունից, թեպետ և պարզապես հայտնի յեր, վոր այդ սուս ե: Խորհրդային կառավարությունը, հասկանալի յե, վոչ մի լիազորություն չի տվել ազ. Դալաղյեյին, նմանապես և չի ունեցել և չունի վոչ մի առընչություն Մյունխենի կոնֆերենցիայի նկատմամբ և նրա վորոշումների նկատմամբ:

Անդլո-Փրանսական ռեակցիան վախենում և Փաշիոմի, համահեղափոխության այդ հենարանի, կրախից և համաձայնում և ամեն տեսակ զիջումների, հաստատելով, վոր թողտվության և ազրեսորի հետ համաձայնության գալու այդ քաղաքականությունն իսկ հանդիսանում և «պայքար խաղաղության համար»: Չեմբեռլենը և նրա Փրանսական բարեկամները զոհաբերում են վոչ միայն թույլ և փոքր ժողովուրդների շահերը, այլև իրենց ներկայացրած պետությունների շահերը:

Շարունակ նորանոր կոնֆլիկտներ, պատերազմը Զինառատանում և Խսպանիայում—ուղղակի արդյունք են իմաստիալիստների միջև Հակասությունների սրման: Այդ պատերազմների և կոնֆլիկտների պրակտիկան ցույց տվեց, վոր ազրեսորների ախորժակները աճում են ուղիղ համեմատական այն զիջումներին, վոր նրանք ստանում են: Մյունխենյան կոնֆերենցիայի վորոշումները—չպետք և աչքերը փակել դրա հանդեպ—նշանակում նա գերմանական աղբեսորի ուժեղացում: Իսկ ո՞ւմ հաշվին կառարվեց այդ ուժեղացումը: Առաջին հերթին Ֆրանսիայի և Անգլիայի հաշվին: Հասարակ տրամաբանությունը խոսում է հողուստ այն բանի, վոր վորքան ուժեղ լինի աղբեսորը, այնքան ավելի մեծ պահանջներ նա կներկայացնի: Յեկը յեթե հիմա այդ պահանջները բավարարվում են փոքր ու թույլ յերկրների հաշվին, ապա արդեն հեռու չե այն մոմենտը, յերբ կծառանա՝ աղբեսորի պահանջներն անմիջականորեն իրենց, այսպես կոչված, բուրժուական-դեմոկրատական մեծ աերությունների հաշվին բա-

վարարելու հարցը։ Հենց դեպի այդ և տանում Զեմբեռլենի և  
նրա Փրանսական բարեկամների քաղաքականությանը։ Քանդե-  
լով կոլեկտիվ անվտանգության սիստեմը, Անգլիան և Ֆրանսիան  
քայլայում են հենց իրենց սեփական դիրքերը և մոտեցնում են-  
հատուցման ժամկետները՝ ազդեսորի հետ համաձայնության  
դալու իրենց քաղաքականության համար։

Միայն Խորհրդային Միությունը անփոփոխ միենույն դիրքը  
բռնեց Զեխոսլովակիայի հարցում—խաղաղության ապավենի և  
ազգեսիայի դեմ մարտիկի դիրքը։ ԽՍՀՄ դիրքը սպառիչ կեր-  
պով ձևակերպվել է ընկ. Լիտվինովի յերկու հայտարարություն-  
ների մէջ՝ Ազգերի լիդայի պլենումում—սեպտեմբերի 21-ին և  
Լիդայի 6-րդ քաղաքական հանձնաժողովում—սեպտեմբերի 23-ին։  
Խորհրդային ժողկոմի առաջին հայտարարությունն ասում ե.

«Յերբ իմ՝ Ժընեվ մեկնելուց միջանի որ առաջ Փրանսական  
կառավարությունն առաջին անդամ դիմեց մեղ՝ հարցում անելով  
մեր դիրքի մասին Զեխոսլովակիայի վրա հարձակում կատարմի-  
լու պետքում, յետ իմ կառավարության անունից տվի միանդա-  
մայն պարզորոց և աներկիմաստ պատասխան, այն ե. մենք մտա-  
դիր ենք կատարելու ըստ պակտի ունեցած մեր պարտավորու-  
թյունները և Ֆրանսիայի հետ միասին Զեխոսլովակիային ոգ-  
նություն ցույց տալու մեղ մատշելի ուղիներով։ Մեր ռազմական  
գերատեսչությունը պատրաստ է անմիջապես մասնակցելու  
խորհրդակցությանը Փրանսական և չեխոսլովակյան ռազմական  
գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ մոմենտի թե-  
լադրած միջոցառումները քննարկելու համար։ Անկախ գրանից՝  
մենք ցանկալի կհամարենք, սակայն, հարցի դրումը Ազգերի լի-  
դայում առայժմս գոնե լ հոգմածի մասին՝ նպատակ ունենալով,  
առաջին, մոբիլիզացիայի յննթարկելու հատրակական կարծիքը  
և, յերկրորդ, պարզելու մի քանի այլ սկետությունների դիրքը և  
նրանց հնարավոր ակտիվ կամ թեկուզ պասսիվ ոգնությունը։  
Անհրաժեշտ է, սակայն, նախ, սպառել դիմումած կոնֆլիկտի կանխ-  
ման բռլոր միջոցները, և այդ միջոցներից մեկը մենք համա-  
րում ենք յեվրոպական մեծ պետությունների և մյուս չահագըր-  
գըսլած պետությունների անհապաղ խորհրդակցությունը՝ կո-  
լեկտիվ դործողությունների եվենտուալ (հավանական) մշակման  
համար։

Ահա թե ինչ եր առում մեր պատասխանը։ Միայն յերեք որ  
արանից առաջ չեխոսլովակյան կառավարությունն առաջին ան-

գառմ հարցում արեց խորհրդային կառավարությանը, թե նա պատրաստ է արդյոք, համապատասխան չեխոսլովակյան պակտի, ցույց տալու անհապաղ և դործուն ողնություն Չեխոսլովակիային այն գեղագրում, յեթե Ֆրանսիան, Հավատարիմ մնալով իր պարտավորություններին, ցույց տա նույնալիսի ովնություն, և դրան խորհրդային կառավարությունը տվեց միանդամայն պարզ ու գրական պատասխան։ Յես կարծում եմ, վոր կհամաձայնվեն, վոր դա միջազգային համաձայնության լոյալ մատնակցի և Ազգերի լիգայի հավատարիմ պաշտպանի պատասխան եր։ Մեղքը ձերը չե, յեթե մեր առաջարկություններին ընթացք չորվեց, վորոնք, —յես համոզված եմ, —կարող եյին ցանկալի արդյունքներ տալ ինչպես Չեխոսլովակիայի, այնպես ել ամբողջ Յեփրապայի և ընդհանուր խաղաղության ողտին։ Դժբախտաբար, ընդունվեցին այլ միջոցառումներ, վորոնք հասցըին, և չեյին կարող շըհացնել, այնպիսի կապիտուլացիայի, վորը վաղ թե ուշ կունենա միանդամայն անսահման կատաստրոֆիկ հետևանքներ։

Ընկե. Լիալինովի յերկրորդ հայտարարությունն ասում եր.

«Արդեն՝ գերմանո-անգլո-Փրանսական ուլտիմատումը նրա կազմից ընդունվելուց հետո, նա (չեխոսլովակյան կառավարությունը։ Խմբ.) հարցում արեց խորհրդային կառավարությանը՝ ինչպիսի գիրք կրոնի վերջինս, այլ կերպ ասած, արդյոք նու իրեն գենես կհամարի կապված չեխոսլովակյան-խորհրդային պակտի հետ այն դեպքում, յեթե Գերմանիան ներկայացնի նոր պահանջներ և անհաջողության մատնվեն անգլո-գերմանական բանակցությունները և յեթե Չեխոսլովակիան վորոշի գենքը ձեռքին պաշտպանել իր սահմանները։

Այդ կըկնակի հարցումը միանդամայն հասկանալի յե, վորովհետև այն բանից հետո, յերբ Չեխոսլովակիան ընդունեց ուլտիմատումը, վորը պարունակում եր խորհրդային-չեխոսլովակյան պակտի ելենտուալ դենոնսացումը (հրաժարումը) խորհրդային կառավարությունն, անկասկած, բարոյական իրավունք ուներ նույնապես անհապաղ հրաժարվել այդ պակտից։

Այնուամենայնիվ խորհրդային կառավարությունը, վորը պատրիվակներ չի փնտում, վորպեսզի խռոսափի իր պարտականությունները կատարելուց, պատասխանեց Պրադային, վոր չեխոսլովակյան կառավարության մատնանշված պայմաններով Ֆրանսիայի կողմից ողնություն ցույց տրվելու գեղագրում ուժի մեջ կմտնի խորհրդային-չեխոսլովակյան պակտը։

Խորհրդային կառավարությունը բացահայտ կերպով ամրող

աշխարհի առաջ հայտարարեց, վոր նա դեմ և Փաշխտական համբակիչների ազգեստիլ մտադրություններին Զեխոսլովակեցան հանրապետության նկատմամբ:

Կոլեկտիվ անվտանգության վիճեցման քաղաքականությունը կիրառվում է վոչ միայն չեխոսլովակեցան հարցում: Արշավանքն ընդում կոլեկտիվ անվտանգության կատարվում և բոլոր ճականներում: Սեպտեմբերի 12-ին ժընկում գումարվեց Ազգերի լիդայի հերթական պլենումը: Որակարդի հարցերից մեկն ել 16-րդ հոդվածն եր ազգեստի գեմ սանկցիաներ գործադրելու մասին: Արշավանքը ընդում այդ հոդվածի, վորն ամենակենառունակ ջիղը, ամենադորձուն պարագրաֆն և Ազգերի լիդայի կանոնադրության մեջ,—սկսվել եր պլենումից գեռմս շատ առաջ: Այդ արշավանքը կաղմակերպել եյին վոչ միայն Փաշխտական պետությունները: Կոպենհագենում կայացած՝ Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Հոլանդիայի և Լյուքսեմբուրգի արտաքին գործերի մինիստրների կոնֆերենցիայում վորում ընդունվեց, վորով վերոհիշյալ պետությունները փաստորներ հրաժարվում եյին ազգեստի գեմ կիրառվելիք կոլեկտիվ սանկցիաներին մասնակցելն իրենց համար պարտադիր համարելուց: Արդեն այն ժամանակ կոնֆերենցիայի մասնակիցները հայտարարեցին, վոր նրանք պատրաստվում են այդ հարցը գնելու Ազգերի լիդայում: Հարցը դրվեց: Յեթ սանկցիաների գեմ արշավանքն սկսեց անդիմական պատմիքակությունը: Նրան միացան, բացի կոպենհագենի կոնֆերենցիայի մասնակիցներից, թյուրքերը, իրանցիները, Հարավամերիկացիները և այլն: Ֆրանսական պատմիքակությունը մի քիչ տատանվեց, բայց հետո անդիմացիների պոշից քաշ յեկավ:

16-րդ հոդվածը լիսվին պահպանելու ոգաբն արտահայտվեցին ԽՍՀՄ-ն, Խավանիան, Զինաստանը, Մեքսիկան, Նոր-Գելանդիան: Վորշափով, վոր հոդվածը կարող է վերացվել միայն այն դեպքում, յեթե համապատասխան վորում ընդունվել միաձայն, նաև ձեւականորեն մնում է Ազգերի լիդայի կանոնադրության մեջ, իսկ նրա գործնական կիրարկման մասին հաղիս թե այժմ կարիք կա խոսելու:

Վո՞րտեղից ծագեց փոքր պիտությունների այդ չարժումը հոդվածի գեմ, վորի հիմնական նպատակն եր հենց նրանց չաշերի պաշտպանությունը: Ի՞նչ պատճառներ ծնեցին ինքնապահության այդ քաղաքականությունը: Զե՞ վոր չեղության վերաբերյալ վորեւ խոսք, վորով քողարկմում են փոքր

պետությունների պատվիրակները, —չի սքողի այն փաստը, վոր փոքր պետությունները իրենք հնարավորություն չունեն ազգեսորեց պաշտպաննելու իրենց: Ինքնըստախնքյան հասկանալի յէ, վոր յերբ փոքր պետությունը զուգըլում և չեղոքության, քղամիուով, ապա այդ նշանակում ե, վոր նա մտադիր ե կողմնորոշվելու դեպի մի ինչ-վոր ուժեղ պետություն: Որինակ բերելը գժվար չե: Ի՞նչպես ե, որինակ, Հոլանդիան յենթադրում պահպանել իր չեղոքությունը: Այդ հարցին մի ականավոր հոլանդական քաղաքական գործիչ ամերիկյան «Ֆորեյն Աֆերս» ժուռնալում հետևյալ կերպ ե պատասխանում: «Արտակարգ դեպքերում Հոլանդիան միշտ պաշտպանվել և Անդլիայի կողմից, վորը կրկնապատճել կարենոր և համարում ինչպես Հուսիսային ծովի այն կողմում անկախ պետության պահպանումը, այնպես ել և Մալակայի նեղուցի ու Ավստրալիայի միջև բանալիքային դիրքի սկահպանումը»:

Ազգերի լիգայի և կոլեկտիվ անվտանգության սիստեմի որինատացիայից գեղի առանձին տերությունների հովանավորումը կամ խոշոր Փաշխտական ազգեսորի հետ համաձայնության գալու որինատացիային անցնելը մեծ չափով արդյունք և կոլեկտիվ անվտանգությունը վիճեցնելու և փոքր յերկրների շահերին դավաճանելու այն քաղաքականության, վորն այնքան բնորոշ և Անդլիայի ու Ֆրանսիայի համար և վորն այնքան ցայտուն կերպով յերեաց Զեխսուլովակիայի որինակից:

Այսպիսով, այստեղ ևս կարելի յետեսնել, վոր բուրժուական-դեմոկրատական պետությունների քաղաքականությունը, վորը հիմնած և ագրեսորների հետ համաձայնության գալու վրա, վիճեցնում և խաղաղությունը և անվտանգությունը, վիճեցնում և ագրեսորայի և պատերազմի դեմ գործուն և ակտիվ պայքար մղելու հնարավորությունը:

Կարելի յէ իրեն հարց տալ. ի՞նչն և համենայն դեպս հարկադրում Անդլիայի գեկասվար շրջաններին վարելու այդ քաղաքականությունը, վորը հակառակ և խաղաղության շահերին և նրա Անդլիայի ազգային շահերին: Զե՞ վոր վերջիվերջո շեռավոր Արևելքում յազոնական աղբեսիան առաջին հերթին հարվածում և Անդրիայի և ԱՄՆ-ի շահերին: Զե՞ վոր Գերմանիայի և Խոալիայի ինտերվենցիան Խովանիայում՝ սպառնալիք և ստեղծում Ֆրանսիայի թիկունքին, սպառնալիք Անդլիայի ծովային հաղորդակցություններին. չե՞ վոր վերջիվերջո Զեիոսլովակիային արված հարվածը փաստորեն նշանակում և այն, վոր Ֆրանսիան լիովին կորցնում և իր գիրքերը կենտրոնական Յել-

ըստայում և իջեցվում և յերկրորդական պետության գրառթյան:

Մինչեւ այն ժամանակը, յերբ Ֆրանսիան և Անգլիան վերէնականացնես յերեան Հանեցին իրենց գիրքը, բոլոր շահագրգոված պետությունները սպասում եյին: Բավական է տակ, վոր նույնիսկ Խալիխան այնքան ել վաղուց չե, վոր արտահայտվեց Սուլեյման մարզը Գերմանիային միացնելու դեմ: Իսկ ինչ վերաբերում է այնպիսի յերկրների, ինչպիսին Լեհաստանն ե, ապա այդ առթիվ անդիխական «Նյու Ստեյտսմեն ենդ նեցն» շարաթաթերթը գրում եր, վոր Լեհաստանի դիրքն ամբողջապես կախված է Անգլիայից, վորովհետեւ գնդապետ Բեկը պատրաստ ունի լեհական քաղաքականության յերեք վարիանտ Զեխոսլովակիայի վերաբերմամբ: 1) յեթե Ֆրանսիան Զեխոսլովակիային ողնության հասնի, ապա ուրեմն Լեհաստանը գնում է Գերմանիայի հետ, 2) յեթե Ֆրանսիան ու Հետեապէս և ԽՍՀՄ-ն Զեխոսլովակիային ողնության հասնեն, ապա ուրեմն, Լեհաստանը մնում է չեղոք: 3) իսկ յեթե Անգլիան միանա Ֆրանսիային ու ԽՍՀՄ-ին, ապա ուրեմն Լեհաստանը պատրաստ է կատարելու իր դաշնակցային պարտավորությունները Ֆրանսիայի վերաբերմամբ և նույնպես գուրս դալու ընդդեմ Գերմանիայի:

Ծակ ա՞յժմ: Լեհաստանը ներկայացրեց լիտի ուլտիմատում և հաջողեցրեց իր պահանջների բավարարումը:

Վոչ մի կասկած չկա, վոր վոչ միայն Լեհաստանն ունեցել քաղաքականության միքանի վարիանտներ Զեխոսլովակիայի վերաբերմամբ և վոչ միայն Զեխոսլովակիայի վերաբերմամբ: Հետաքրքրական մանրամասնություն: Ֆրանսիան դժվար թե կարող է այժմ հույս դնել Հարավսլավիայի վրա վորպես իր դաշնակցի՝ ընդդեմ Գերմանիայի: Իսկ մինչդեռ Պրադայի հարավուլայան դեսպանը ուսւմնական դեսպանի հետ միասին սեպտեմբերի 25-ին հայտարարեցին չեխոսլովակիան կառավարությանը, վոր Հարավսլավիան և Ռումինիան պատրաստ են կատարելու իրենց պարտավորությունները վորպես Փոքր Անտանտի մասնակիցներ և Զեխոսլովակիային ողնության կհասնեն Հունգարիայի կողմից հարձակում կատարվելու դեպքում:

Կարելի յէ ամենաչնչին չափով իսկ չկասկածել, վոր յեթե Անգլիան ու Ֆրանսիան հենց սկզբից ամուր և վճռական դիրք բռնեյին, Հիտլերը վոչ միայն կնահանջեր, այլև իր դաշնակիցներից շատերին կկորցներ:

Ի՞նչն ե, համենայն դեպս, դաղտնիքը: Այդ հարցի պատաս-

խանը պետք ե վորոնել բուրժուական-դեմոկրատական պետությունների, առաջին հերթին Անդլիայի կառավարող շրջանների բազաքականության գառակարգային բովանդակության մեջ:

«Այսպես կոչված «դեմոկրատական» պետությունները, իհարկե, հայանություն չեն տալիս ֆաշիստական պետությունների «ծայրահեղություններին» և վախենում են ֆաշիստական պետությունների ուժեղանալուց: Բայց նրանք ե'լ ավելի վախենում են բանվորական շարժումից Յեկառապայում և ազգային-ազատագրական շարժումից Ասիայում, գտնելով, վոր ֆաշիզմը «լավ հակաթույն» և ընդդեմ այդ բոլոր «վասնդավալոր» շարժումների: Ուստի «դեմոկրատական» պետությունների ղեկավար շրջանները և, մանավանդ, Անդլիայի ղեկավար կոնսերվատիվ շրջանները, սահմանափակվում են կազմը կտրած ֆաշիստական պարագլուխներին համոզելու քաղաքականությամբ—«բանը չհասցնել ծայրահեղության», միաժամանակ նրանց հասկացնելով, վոր իրենք «լիովին հասկանում» և հիմնականում համակրում են նրանց ռեակցիոն-վոստիկանական քաղաքականության ընդդեմ բանվորական ու ազգային-ազատագրական շարժման: Անդլիայի ղեկավար շրջաններն այսուղև հետեւում են մոտավորապես նույնպիսի քաղաքականության, վորպիսի քաղաքականության հետեւում եյին ցարիզմի որով ուստական լիբերալ-միապետական բուրժուաները, վորոնք, վախենալով ցարական քաղաքականության «ծայրահեղություններից», ե'լ ավելի վախենում եյին ժողովրդից և այդ պատճառով անցան ցարին համոզելու քաղաքականության, հետեւապես՝ ընդդեմ ժողովրդի՝ ցարի հետ խօսքը մեկ անելու քաղաքականության: Ինչպես հայտնի յէ, Թուառաստանի լիբերալ-միապետական բուրժուազիան չտրաչար տուժեց այդպիսի յերկողիմի քաղաքականության պատճառով: Պետք ե յենթագրել, վոր Անդլիայի ղեկավար շրջանները և նրանց բարեկամները միրանսիայում ու ԱՄՆ-ում նույնպես կստանան իրենց պատմական հասուցումը»<sup>1</sup>:

1 Համամիտութենական կոմսանիստական (բուհեկների) կուսակցությունը պատճառություն: Համառատ գաղընթաց, Եջ 448—449:



Թարգմանեց Ա. Զաքարյան  
Խմբագիր Վ. Փինաշյան  
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան  
Սրբազրիչ Վ. Զիդեցյան  
Կոնսուլ սրբազրիչ Լ. Արովյան

---

Դաշինակի լիտղոր №—2505, հրատ. № 633  
Պատկեր № 181, տիրաժ 5000  
Քղթի չափոը 62×94<sup>1/16</sup> 38,400 տպ. նիշ 1 տպ. մամուլում  
2 տպ. մամուլ, 1 թերթ թուղթ:  
Հանձնված ե արտադրության 13/XII 1938 թ.  
Ստորագրված ե ապազրելու 14/1 1939 թ.  
Գի՞նը 40 կ.

---


Գևհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության  
ապահովան, Յերևան, Ալավերդյան № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220029786

ԳԻՒՐ 40 կ.



Я. ВИКТОРОВ  
АГРЕССИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ  
ЕВРОПЕ

Армгиз—Издательство полнт. литературы  
Ереван, 1939